ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2213-Ա/2 **«25» հոկտեմբերի, 2023 թ.**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ 2023/2» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով», հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 07-ի № 1765-Ա/2 հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 23-ի նիստի № 3 արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին՝

– ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը,

– կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը,

– ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2023 թվականի նոյեմբեր ամսից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2023 թ. հոկտեմբերի 25-ի
N 2213-Ա/2 հրամանի

ՑԱՆԿ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ 2023/2» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

	Բնագավառ	Ծածկագիր	Ղեկավարի ազգանուն անուն	Թեմայի վերնագիր	Կազմակերպություն
1	Ֆիզիկա և աստղագիտություն	23/2IRF-1C003	Աբգարյան Վահագն Սարգսի	Քվանտային վիճակների տարածության երկրաչափություն և փուլային տարածության ֆորմալիզմ	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ